



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

Մասնագիտություն՝ Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն) /դասիչ 061101.00.6 /
Կրթական ծրագիր՝ Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա /դասիչ 061101.02.6/
Որակավորումը՝ ինֆորմատիկայի բակալավր
Ուսուցման ձև/կիսամյակ առկա 8-րդ կիսամյակ, 4 կրեդիտ

Հաստատված է ամբիոնի նիստում (արձ. N9 26.01.2024թ.)

Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի վարիչ՝  Հ.Օհանյան

Հաստատված է բնական գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդի նիստում (արձ. N8 ,
31.01.2024թ.)

Բնական գիտությունների ֆակուլտետի ղեկան՝  Հ. Գրիգորյան



Կազմող՝  Հ.Օհանյան

Վանաձոր 2024թ.

1. Պրակտիկայի նպատակը

Ուսանողի արտադրական պրակտիկան ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի բնագավառի մասնագետի ձևավորման գործընթացի հերթական կարևորագույն փուլն է, որի ընթացքում ուսանողը

- ծանոթանում է SS ոլորտի կազմակերպությունների աշխատանքի հիմնական ուղղություններին ընդհանրապես, և մասնավորապես, այն կազմակերպության, որի հետ կնքվել է պրակտիկայի պայմանագիրը,
- ամրապնդում և ընդլայնում է ուսումնառության տարիներին ձեռք բերած տեսական գիտելիքներն ու գործնական հմտությունները՝ կիրառական խնդիրների լուծման միջոցով:

2. Պրակտիկայի խնդիրները

Արտադրական պրակտիկայի հիմնական խնդիրներն են.

- ծանոթություն կազմակերպությունում իրականացվող կիրառական ոլորտի աշխատանքների հետ,
- կազմակերպության առաջատար մասնագետների մասնագիտական ոլորտում ունեցած փորձի ուսումնասիրում,
- առաջադրված կիրառական խնդիրների լուծման համար անհրաժեշտ գրականության ուսումնասիրում,
- առաջադրանքների կատարում և ամփոփ ներկայացում:

3. Պրակտիկանտի պարտականությունները

- պրակտիկանտը ծանոթանում է տվյալ կազմակերպության կուլեկտիվի հետ,
- ուսումնասիրում է տվյալ կազմակերպության աշխատանքային գործնեության ոլորտը,
- կազմում է անհատական աշխատանքային պլան՝ պրակտիկայի ղեկավարների ուղղորդմամբ,
- ենթարկվում է տվյալ կազմակերպության աշխատանքային ներքին կանոնակարգին,
- պրակտիկա է անցկացնում ամեն օր 6 ժամ (որից մի մասը հնարավոր է ինքնուրույն) իր անհատական աշխատանքային պլանի համաձայն և կատարած աշխատանքը վերլուծում օրագրում,
- պրակտիկայի ավարտից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում առարկայի մեթոդիստիկն է ներկայացնում պրակտիկայի օրագիրը,
- մասնակցում է պրակտիկայի պաշտպանությանը:

4. Պրակտիկայի հաստատությունը, վայրը

Պրակտիկան իրականացվում է Ինստիտյոթ Մոբայլ» փակ բաժնետիրական ընկերությունը ՎՊՀ-ում և ընկերության տարածքում:

5. Պրակտիկայի ընթացակարգը

N	Կուրսը	Կիսամյակ	Տևողությունը	Կրեդիտները
1	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա IV	8	4 շաբաթ	4

6. Պրակտիկայի նախապատրաստական փուլում և պրակտիկայի ընթացքում պրակտիկայի ղեկավարը պարտավոր է.

Ա. Ուսումնասիրել արտադրական պրակտիկայի ծրագիրը, նախանշել անելիքները:

- Պրակտիկան սկսվելուց երկու շաբաթ առաջ ուսումնասիրել պրակտիկայի անցկացման ծրագիրը, թեմատիկ պլանները, չափորոշիչը:
- Իրականացնել նախապատրաստական խորհրդատվություն՝ ուսանողներին ծանոթացնել պրակտիկայի ծրագրին, պրակտիկանտի պարտականություններին և իրավունքներին, օրագրի վարման կարգին:
- Լրացնել օրագրի «Պրակտիկայի նպատակը» էջի համապատասխան տողերը, օգնել ուսանողին ներկայացնել պրակտիկայի անհատական պլանը օրագրի «Անհատական պլան» բաժնում:

Բ.Նախապես կազմած օրացույցային պլանի համաձայն իրականացնել հետևյալ աշխատանքները:

- Մշակել աշխատանքի կատարման ժամանակացույց և ներկայացնել պրակտիկայի օրագրի լրացման կանոնները:
- Հետևել ուսանողի կողմից պրակտիկայի օրագրի ժամանակին ու մեթոդապես ճիշտ վարմանը և պատասխանատվություն կրել դրա համար:
- Ղեկավարել առարկայական միջոցառումների կազմակերպական աշխատանքները:
- Պրակտիկայի անցկացման վայրի աշխատակից ղեկավարի հետ միասին հետևել ուսանողների հաճախմանը, ուսանողների բացակայության դեպքում տվյալները ներկայացնել ղեկանատ:
- Քննարկել ուսանող պրակտիկանտի կողմից իրականացված յուրաքանչյուր աշխատանք՝ նշելով դրական կողմերը, նկատված թերությունները:
- Մասնակցել մյուս ղեկավար(ներ)ի կազմակերպած քննարկումներին:
- Ուսանողներին ծանոթացնել պրակտիկայի ծրագրին ու տրամադրել մասնագիտական գրականության համապատասխան ցանկը:

7. Պրակտիկայի ընթացքում տվյալ ստորաբաժանման մասնագետը պետք է.

- ծանոթացնի ուսանողներին իրականացվող աշխատանքի առանձնահատկություններին,
- օգնի ուսանողին կազմել անհատական պլանը,
- ապահովի անհրաժեշտ աշխատանքային պայմաններ,
- հետևի ուսանողի կատարած աշխատանքին,
- կատարի վերահսկողական աշխատանքներ, այդ թվում նաև հաճախումների վերահսկողություն՝ համագործակցելով պրակտիկայի ղեկավարի հետ,
- մասնակցի ուսանողների պրակտիկայի գնահատմանը:

8. Պրակտիկայի ավարտից հետո ստորաբաժանման մասնագետը պետք է.

- Գնահատի ուսանողի կատարած աշխատանքը՝ հիմք ընդունելով պրակտիկայի ընթացքում ցուցաբերած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները:

9. Պրակտիկայի հաշվետու փաստաթղթերը

- Բոլոր տեսակի արտադրական պրակտիկաների համար նախատեսված է օրագիր:

10. Պրակտիկայի գնահատումը

Պրակտիկայի ղեկավարը և տվյալ հաստատության մասնագետը նշանակում են հանրագումարային գնահատականներ՝ համաձայն ՎՊՀ «Պրակտիկայի կանոնակարգում» տրված սանդղակի բոլոր բաղադրիչների(աղյուսակը տրված է ստորև): Այդ գնահատականների հիման վրա նշանակվում է ուսանողի պրակտիկայի ընդհանուր գնահատականը, որին ավելացվում է նաև պրակտիկայի պաշտպանության համար տրվող միավորը:

Գնահատմանբաղադրիչները	Հատկացվող միավորը	Ում կողմից է գնահատվելու, ամփոփման կարգն ու ժամկետները
1 Հաճախելիություն	0-10	Առարկայի մեթոդիստ և պրակտիկայի ղեկավար
2 Առարկայական իմացություն	0-10	Առարկայի մեթոդիստ և պրակտիկայի ղեկավար
3 Մասնագիտական հմտությունների և կարողությունների դրսևորում 1 2 3 ...	0-60	Առարկայի մեթոդիստ և պրակտիկայի ղեկավար
Պաշտպանություն	0-20	Պրակտիկայի մեթոդիստ և պրակտիկայի ղեկավար
Ընդհանուր միավորը	100	

Պրակտիկան գնահատվում է՝ ըստ սահմանված չափանիշների, բազմագործոնային համակարգով, պրակտիկայի ընթացքում ձեռք բերված կարողությունների, հմտությունների, կոմպետենցիաների հիման վրա:

Մասնակցության աստիճանը %	Հատկացվող միավորը
96-100	10
91-95	8
86-90	6
81-85	4
76-80	2
0-75	0

11. Պրակտիկայի չափորոշիչ

Ուսանող-պրակտիկանտը պետք է ներկայացնի իր կողմից իրականացված աշխատանքների ժամանակացույցը, կարողանա լրացնել օրագիրը:

12. Պրակտիկայի բովանդակությունը

1) Ծանոթացում (I շաբաթ).

- Նախատեսված գրականությանը,
- տվյալ կազմակերպության աշխատանքներին:

2) Ծանոթացում (II շաբաթ).

- տվյալ կազմակերպության մասնագիտական հետաքրքրություն ներկայացնող գիտահետազոտական ուղղվածություններին
- տվյալ կազմակերպության մասնագիտական հետաքրքրություն ներկայացնող կիրառական ոլորտի խնդիրների լուծման մեթոդներին:

3) Մասնագիտական աշխատանքների իրականացում և առաջատար մասնագետների փորձի ուսումնասիրություն (III-IV շաբաթներ).

- կիրառական խնդիրների լուծման ալգորիթմների մշակում ,
- ըստ կազմած ալգորիթմների ծրագրերի կազմում, թեստավորում և կարգաբերում:

Ուսանող-պրակտիկանտը պարտավոր է ունենալ պրակտիկայից դուրս միջոցառումների անցկացման հատական պլան-ժամանակացույց:

Պրակտիկայի պաշտպանությանը մասնակցում են պրակտիկայի ղեկավարները, ֆակուլտետի ղեկանը, ամբիոնի վարիչը:

Կումպետենցիաների ցանկ,

որոնք «Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկա» մասնագիտությամբ բակալավրի որակավորում ունեցող ուսանողը ձեռք կրերի արտադրական պրակտիկայի արդյունքում՝ սահմանված 061101.02.6

«Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկա» ԿԾ-ով

ա) Գործիքային կումպետենցիաներ (ԳԿ)

- ԳԿ2 կազմակերպելու և պլանավորելու ունակություն,
- ԳԿ4 մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ
- ԳԿ5 մայրենի լեզվով բանավոր և գրավոր հաղորդակցություն

բ) Միջանձնային կումպետենցիաներ (ՄՉԿ)

- ՄՉԿ2 թիմային աշխատանք,
- ՄՉԿ3 միջանձնային ունակություններ,

գ) Համակարգային կումպետենցիաներ (ՀԳԿ)

- ՀԳԿ1 գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,
- ՀԳԿ4 նոր իրավիճակներին հարմարվելու ունակություն,
- ՀԳԿ6 առաջնորդի հատկություններ

դ) Առարկայական (մասնագիտական) կումպետենցիաներ (ԱԿ)

- ՄԿ6 կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները:

2022-2023 ուստարվա արտադրական պրակտիկայի ժամանակացույց
02.02.2024 - 29.02.2024

Պրակտիկայի փուլը	Կատարվելիք աշխատանքը	Պրակտիկայի վայրը	Անցկացման օրը	Պատասխանատու
1-ին շաբաթ				
Նախապատրաստական փուլ	Ծանոթացում արտադրական պրակտիկայի բովանդակությանը, ծրագրին, ժամաքանակին, պրակտիկայի իրականացման վայրին, փաստաթղթերին:	ՄԲ ամբիոն	02.02.2024	ամբիոնի կողմից նշանակված ղեկավարներ
Ծանոթացման փուլ Նախատեսված գրականությանը, գործիքաշարին և գործընթացներին	Ծանոթացում պրակտիկայի ընթացքում անհրաժեշտ գրականության, գործիքաշարի և գործընթացների հետ	ՎՊՀ և Ինստիտյոս Մոբայլ» փակ բաժնետիրական ընկերության տարածք		ամբիոնի և կազմակերպության կողմից նշանակված ղեկավարներ
2րդ շաբաթ				
Գիտահետազոտական ուղղվածություններին ծանոթացման փուլ	Ծանոթացում համապատասխան կազմակերպության մասնագիտական հետաքրքրություններ կայացնող գիտահետազոտական ուղղվածություններին և մասնագիտական հետաքրքրություններ կայացնող կիրառական ոլորտի խնդիրների լուծման մեթոդներին	ՎՊՀ և Ինստիտյոս Մոբայլ» փակ բաժնետիրական ընկերության տարածք		ամբիոնի և կազմակերպության կողմից նշանակված ղեկավարներ

3-րդ շաբաթ

Կիրառական խնդիրների լուծման ծրագրերի մշակման փուլ	կիրառական խնդիրների լուծման համար ծրագրերի մշակում	ՎՊՀ և Ինստիտուտ «Մոբայլ» փակ բաժնետիրական ընկերության տարածք		ամբիոնի և կազմակերպության կողմից նշանակված ղեկավարներ
---	--	--	--	---

4-րդ շաբաթ

Կիրառական խնդիրների լուծման համար ծրագրերի մշակման փուլ	կիրառական խնդիրների լուծման համար ծրագրերի մշակում	ՎՊՀ և Ինստիտուտ «Մոբայլ» փակ բաժնետիրական ընկերության տարածք		ամբիոնի և կազմակերպության կողմից նշանակված ղեկավարներ
Առաջատար մասնագետների մասնագիտական ոլորտում ունեցած փորձի ուսումնասիրության փուլ	Առաջատար մասնագետների մասնագիտական ոլորտում ունեցած փորձի ուսումնասիրում	ՎՊՀ և Ինստիտուտ «Մոբայլ» փակ բաժնետիրական ընկերության տարածք		ամբիոնի և կազմակերպության կողմից նշանակված ղեկավարներ
Արդյունքների ամփոփման փուլ	Կատարված աշխատանքի ամփոփում և ներկայացում			ամբիոնի և կազմակերպության կողմից նշանակված ղեկավարներ